


ՎԱՐՈՒՄԻՆԻՍՏՐԱՏՐԱՏԻՆԸ

Պուշկարիոյ	հաւար
Տարեկան	12 Ֆր
Էկզուսիտայ	6 »
Սրատասիւնակի	
հաւար տարեկան	15 »
Էկզուսիտայ	8 »

Աւերիկայի	հաւար
Տարեկան	3 զր.
Էկզուսիտայ	1.50 »

Մասնագումար սողր ստու
քին երեկին հաւար 40 ս.
իսկ վերին երեսի հա-
ւար 20 սակիսի հ. երե-
կին աւելի ակզաւնենու
հաւար 20 0/0 զեղջ կրոյ
լայն
Վաւարի հաւար 3 զր. 10 սակիսի



R. P. Kalmencarian, Mechitharistengasse
(Autriche) W. 4.
Vienna

Չարձումի և զրաւ որիկի
իւրաքանչեւիս հաւ-
արիկի

Редакция на вѣстникъ
„Шаржумъ“
Варна

Redaction du journal
„Charjoun“
Varna (Bulgarie)

Արտասահմանի հաւար
ձեռք
(20 ՍԱՆԹԻՄ)
Պուշկարիոյ հաւար
ձեռք
(15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք ևս չեն տրուիր

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂՊՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԴՏԱՐԱՎՈՒԻ ԶՈՐԻՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

«ՇԱՐՋՈՒՄ Ի ԲԱՏԱՆՈՐԻ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ ԿԱՆՈՒԿ ՎԱՐՈՒՄԻՆԻՍՏՐԱՏԻՆԸ»

ՍԱՍՆՈՅ ՇԱՐՋՈՒՄՆԵՐԸ
—(—)

Մայիս 23ին Պուշկին Վիեննա կը
հետադարձ թէ այնտեղի անգլիական
դեսպալը Սուլթանի հետ խոսակցու-
թիւն մը ունեցեր է հայերու կարու-
թեան մասին. վաճառ մէջ ձերբա-
կալուած են շատ ապստամբներ.
հայ ապստամբապետ Անդրանիկը կը
գտնուի Մուշի վիլայէթի մէջ.

—Էրզրումի մէջ եւ իր շրջակայնե-
րը ձերբակալուած են շատ հայեր.
Ձերբակալուած են նոյնպէս շատ մը
քուրտ ցեղապետներ.

—Վիեննայի «Վիս. Թագէպլաթ»
թերթը Պուշկին կիմանայ որ Հայաս-
տանէն եկած տեղեկութիւններու
համաձայն թուրք զօրքերը յաջողած
են զէպի աուսական սահմանագիւղը
հայածել շատ մը հայ հրոսախմբեր.
Անդրանիկը իր խմբով միասին դեռ
լեռներուն մէջ պահոււրտած է.

Այս լուրերից, որոնց ճշդու-
թեան մասին լինելու հաւա-
նականութիւնը կայ, բաւական
որոշ կերպով տեսնվում է, թէ
Պասնոյ շարժումները հետզհետեւ
մեծ ծաւալ են ստանում այլքա-
ւորվելով մինչեւ վասպուրականի
կեդրոնը և ուսական սահման-
ները. Այդ ծաւալման հետ միա-
սին աչքի է զարկում յայտնի իրո
զութիւնը, թէ Անդրանիկը իր
խմբով կամ խմբերով, շար-
ժումների գլխաւոր պատճառն ու
ազդակը ոչ միայն ազատ է, այլ
և բարոյական անմահչելի թուրք
զօրքերին ու կառավարութեան.
Արեւմտայ գաւառման մէջ,
քանի որ Անդրանիկը ոչ չէ և
գտնվում է շարժումների կեդրո-
նավայրում, մեծ յոյս կայ թէ
թուրք կառավարութեան չը
պէտք է յաջողվի շուտով լռեցնել
հայ քաջերի զէնքերի շաչիւնը.
Իսկ որչափ այդ շաչիւնը էր.
կարտուել լինի, այնքան նա մեր
գաւթի համար նպաստաւոր կը
լինի.

Մի բան եւս ակնյայտնի է.
այն է որ թուրք կառավարու-
թիւնը խուսափում է Անդրանիկի
ետեւից ընկնել.
Այս անգամ այդ գազանը սան-
ձահալված լինելով եւրոպական
բաւական շուտ միջամտութիւնով,

կոտորած չէ մեծ առաջ բերում.
Իսկ առանց կոտորածի էլ չէ ու-
զում իր զօրքերը քշել Անդրա-
նիկի գէտ. որովհետեւ մեծ ընդ-
հարումներ կարող են տեղի ունե-
նալ, թուրք պիւնտր կարող է ոչն-
չանալ, ու ամենակարեւորը հայ-
կական շարժումները կանոնաւոր
ապստամբութեան կերպարանք
առնելով աւելի մեծ արձագանք
կը տան թէ հայ ժողովրդի մէջ
և թէ Եւրոպայում. ինչ ապստամ-
բութիւնները, որոնք շուտով չեն
խելվում, որոնք բռնակալից
մեծաքանակ զոհեր են խլում և
ցոյց տալիս նրա զինուորական ու
վարչական խախուտ և փթած վի-
ճակը միշտ առաջ են բերում եւ-
րոպական պետութիւնների աւե-
լի կորուկ և որոշ միջամտու-
թիւնը.

Թուրքիա այդ միջամտութիւ-
նից այսօր աւելի է խուսափում
քան երբեք, որովհետեւ ուսու-
պետութիւնը, որը նոյնպէս
հակառակ է հայկական հարցի
արագ և ինչպատ հայերիս լուծ-
ման ու բացարձակ թշնամի
հայ ժողովրդին, այսօր չպէտք
է կարողանայ ինչպատ Թուրքիա-
յի այն դերը խաղալ, ինչ որ խա-
ղաց 90 թւականներին.

Ի հարկէ ապստամբութիւնը
յարատուելու մեզ համար ցան-
կալի. Թուրքիայի և Ռուսիոյ
համար անհասելի, եւրոպական
միջամտութիւնը ստեղծելու գոր-
ծի մէջ ամենամեծ դերը պէտք
է խաղալ հայ ժողովուրդը և Հայ
յեղ. Դաշնակցութիւնը.

Ի՞նչ է հայ ժողովուրդը ճէֆքի-
ների պէս մտածէ, որոնք մտա-
ծում են Ձէքի փաշաների և սուլ-
թանների նման, իսկ Դաշնակ-
ցութիւնն էլ չը կարողանայ իր
ուժերը ներածի չափով, որոնք
այսօր արհամարհելի ուժեր չեն,
չարունակել ապստամբական շար-
ժումները, այս անգամ էլ հայ-
կական հարցը ունի լուծում չի
կարող ստանալ.

Ի այդ սյդ չէ նշանակում թէ
ներկայ շարժումները օգտակար
չեն, եթէ նոյնիսկ վաղը նրանք

վերջանան բաւական զգալի վը
նասնեւրով.

Ոչ նրանք օգտակար և շատ
օգտակար են. Այդ շարժումները
մի քանի քայլ միանգամից
կը մտեցնեն մեզ մեր նպատա-
կին, որովհետեւ նրանք իրենց
խոշոր շափով զօրեղութեան և
բարոյական առաւելութիւններով
մեր մէջ գրեթէ առաջինն են.
և մտակայ հանգրվանը աւելի
մեծ ու վճռական ապստամբու-
թեան, որին երբեմն դանդաղ,
երբեմն արագ քայլելով մտե-
նո մէ մեր յեղափոխութիւնը.

Մենք մինչեւ օրս բուն Հայաս-
տանի մէջ, բացի արշաւախմբե-
րից, այսպիսի կանոնաւոր, և
մեծ քանակութեամբ հայ ժող-
վրդի մասնակցութեամբ շար-
ժումներ չենք ունեցել. Այս գրե-
թէ առաջինն է. և փառք ու պա-
տիւ այն քաջերին ու անձնազո-
հերին որ ստեղծեցին այն թըր-
քական ստիպումով.

Եւ ով սրա հակառակն է մտա-
ծում, նա կամ դեռ ըմբռնելու
կարողութիւնը չունի, կամ թէ
հոգով, սրտով, արիւնով ու մտով
թուրք է, ինչպէս Հասան Շէֆ-
քի Գուրպէթ օղլուները, Բայց
սա էլ կանցնի, ժաւանակը չըմ.
բանդներին ըմբռնել կը տայ,
իսկ հայ թուրքերին էլ իրենց
պատիժը. Մենք հաւատում ենք
դրան, ինչպէս և հաւատում ենք
հայ ցեղի բարեք ապագային.
ՎԱՐՈՒՄ

ՅՐԱՆՍԵՑ ՏԸ ԲՐԵՍՏԱՆԷ

—(—)
Ֆրանսայի հոշակաւոր երեսփո-
խան և դիրո-Արմէնիայի խըմ-
բադրական յանձնաժողովին ան-
դամներէն Պ. Բրէստանէ հետեւ-
եալ նամակները ուղղած է Ֆրան-
սայի արտաքին գործոց նախա-
րար Պ. Տէրկասէին.

Բարիք 26 մայիս 1904
Պարոն նախարար և սերելի
պաշտօնակից

Թոյլ տւէք ինձ զձեզ մասնակից
ընել այն մեծ վտանգ սպառնա-
ցող հեռագրիներուն զորս ես ըն-
դունած եմ թիվիդէն և Պաքու-
էն, և որոնք բոլոր մանրամաս-
նութիւններով կը հաղորդեն Սա-
սունի կոտորածներու վերսկսումը
մեծ շափերով. Կշտապեմ ձեզ ի-
մացնել որ կարելի եղածին շափ
շուտով պատիւը պիտի ունենամ
ձեզ հարցապնդելու այն միջոց-
ներու մասին զոր ֆրանսական
դիւանապետութիւնը ձեռք պիտի
առնէ դարդեցնել տալու համար
այս ոճիրները, և սանձահարէ որ-
պէս զի սասը տարի առաջ կո-
տորուած գէպքերուն կրկնու-
թեան առաջը առնուի.

Շատ երախտապարտ պիտի մը-
նամ ձեզի, երբ բարեհաճէք թը-
ւական նշանակել թէ՛ երբ կրնամ
իմ հարցապնդումս ուղղել Ձեզ և
կը խնդրեմ Ձեզնէ եւայլն...

Ֆրանսիս սր Բրեստանէ
(Երեսփոխան Ռոնի)

Բարիք կիրակի երեկոյ 29 մայիս
1904

Պարոն նախարար և սերելի
պաշտօնակից,

Թոյլ տուէք զարմանալու որ
մինչեւ օրս չստացայ վերջին
հինգ շաբթի, 26 մայիս, օրը ձեզ
ուղղած նամակիս պատասխանը.
որով խնդրած էի նշանակել թը-
ւականը, երբ ձեզ հաճելի կըլ-
լար ընդունիլ իմ՝ երեսփոխանա-
կան ժողովի մէջ ընելիք հարցա-
պնդումը Սասունի կոտորածնե-
րու մասին. Արիւնը կը հոսէ.
ժամանակը կշտապէ, ստիպողա-
կան պահանջ կայ որ Ֆրանսան
հրապարակաւ և պաշտօնապէս
այս ոճիրները դադարեցնելու աչ-
դանշանը տայ և առջեւը առնէ
1895 թւականի սոսկալի դժբախ-
տութեան կրկնութեանը.

Ես համարձակութիւն կունե-
նամ ձեզի իմացնելու թէ՛ արդ-
եօք Դուք երեքշաբթի օրը, մա-
յիս 31, ժամանակը հասած չէ՞ք
համարեր իմ հարցապնդումիս
պատասխանելու.

Ընդունեցէք եւն...
Ֆրանսիս սր Բրեստանէ
Երեսփոխան Ռոնի

...Պ. Տէրկասէն զգեկու թիւն- ներու յաւելման սպասելով . Պ. Արեւանսէէն խնդրանք է իր հար- ցապնդումը թողուլ յունիս 2ին . կամ ամենաուշը 6ին :

(Pro Արեւելիս)

ՍՐԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

Ապրիլ ամի մէջ, Ռաթուժ, իր հոգին անդամ է կովկասահայ հան- րային եւ գրական գործիչներէն Արգար Յովհաննէսեանը . որը իր խմ- բագիր թերեւս իր բռնած գիրքովը, ազդեցութեամբը երկրորդը ըլլար Գրիգոր Արծրունիէն յետոյ . կով- կասահայութեան մէջ : Արգար Յով- հաննէսեան չափաւոր հայ ազատամիտ- ներէն կրնար հաշուել . եւ Արծրու- նի խիստ ու կտրուկ նկարագրին եւ ուղղութեանը հետ չը հաշտուող գը- գրական եւ այլ գործիչները ինչպէս Ստեփաննոս Պալասանեան, Փիլիպ- պոս Վարդանեան, նոյն իսկ երբեմն Գաթիկան եւ Ռաֆֆի Արգարին հետ միասին կերթային : Արծրունին ին- քը՝ կովկասահայ հանրային միւս գործիչներէն աւելի Յովհաննէսեանը կը յարգէր եւ այդ ցոյց տուաւ . ներ- սէս պատրիարքի կաթողիկոսական ընտրութեան ատենը . երբ պարտա-ւոր եղաւ . «Մշակըր աստամապիս զարեցնել եւ արտաստման երթալ : Թիֆլիզը Արծրունին պատգամաւոր կուգէր ընտրել . Արծրունի ընտրու- թեան սրահին մէջ հրաժարեցաւ ընտ- րելի ըլլալէ . ու ընտրողներուն կող- ջրու իրեն փոխարէն Արգար Յով- հաննէսեանի ձայն տալ . որ նոյնպէս ներսէսի թեկնածութեանը կը պաշտ-

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ ԵՒ «ՄՇԱԿ»Ի ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆ

Բ. Մշակի ստացին տարի . ներք միւնչել 1876

1871ի սեպտեմբերին թիֆլիսի հայ հասարակութեան մէջ յայտարարու- թիւն մը կը ցրուուէր խումբ մը մտքուած երիտասարդներու ստորագ- րութեամբ . ուր նոր թերթի մը հը- րատարակութիւնը կը ճանուցանէր . պարզ ու անպաճոյճ պարբերութիւն- ներու մէջ . որ կը պարզուէր միտն- թամայն նոր թերթին ծրագիրը . շատ բացորոշ ու շատ յստակ բառերով . ստանց հայ ապագայ ընթացողներուն յաւիտենական ազգասիրութեան կող- ջնելու . առանց ազգին փրկութիւն խոստանալու : Յայտարարութիւնը կարդացող լրջօրէն մտաւոր շրջանակը իսկոյն պիտի ըմբռնէր թէ՛ սովորա- կան թերթի մը ազդանիչ չէր ան . նորութիւն մը պիտի ըլլար անպատ- ճառ . Բայց ո՞վ երբէք կը գուշակէր թէ այդ յայտարարութեան ծանու- ցած թերթը ամբողջ 20 տարի հայ- կական կեանքի ամենէն ուղղամիտ ղեկավարողը . ամենէն անաչառ դա- տաւորը . ամենէն անհաւանդիր ու անկալաւ մարտկոցը պիտի հանդի- սանար . ճանչցնելով հասարակու- թեան հայ խմբագրին իսկական կո- չումը . հայ կեանքին ճշմարիտ պա- հանջները եւ անվարկէն . անգթու- թէն նոյնիսկ վեր հանելով բոլոր ու-

պանէր : Արգար Յովհաննէսեան նոյնպէս թիֆլիզի բարձրագոյն եւ կրթնալ ընտանիքի մը զաւակն էր . անոր հայրը . եթէ չեմ սխալիր Միխայէլ Նիքոլաւիչին պալատան բժիշկն էր . ծնուեր է 1848 թուականին . նախ- նական եւ միջին կրթութիւնը ստա- նալով սեղական ուսում յիմնադրի մէջ . ապա բարձր . կրթութիւն ստացեր է Բեթերսպուրկի եւ Լայպցիկի համալ- սարաններուն մէջ . ուսանելով իրաւ-ւաբանութիւն . փիլիսոփայութիւն եւ քաղաքական տնտեսութիւն :

Բարձրագոյն կրթութեամբ դին-ւած . Արգար Յովհաննէսեան 72 թը-ւականին թիֆլիզ կը վերադառնայ . ան ալ . ինչեւ ոչ Արծրու-նիին յս-խուսնութեամբ . ինքզինքը կրտով շափ կը նուիրէ իր ժողովուրդի մտա-ւոր զարգացման գործին . քանի մը տարի վերջը կը հիմնէ «Փորձ» ամսա-գիրը . որուն կախատակէն կովկասի գրքական առաջնակարգ ուժերը . ա-պա 82 թուականին . «Արձագանգը» : Բայց այդ Արգար Յովհաննէսեան ձեռնարկեց հայ գրագիտներուն աչ-խատութեանց գերմաներէն թարգ-մանութեանց հրատարակութեան :

Ինչ մը փառասնէյ ըլլալով կը ձգտէր կովկասահայութեան ամեն հաստատութեանց մէջ սեղ բռնել . զիրք գրաւել . ու իր գործունէնու- թիւնը թափփփած ըլլալով . եւ ուղ-ղութիւնը քիչ մը առաձգական չը կրցաւ Արծրունիի վարչը ստանալ :

Արգարին զանազան ընկերութեանց անդամ ըլլալու . միւլութիւնը այն-քան զօրեղ էր . որ կովկասի մէջ ա-ռակ դարձած էր .—Եթէ լուսնակի վրա ընկերութիւն մը հիմնուէր Ար-գարը հոն ալ անդամ պիտի ըլլար . կրէին :

գործելութիւնները . ապականու- թիւնները . փառութիւնները որոնք դարերով ստրկացած մեր ազգին մէջ անողորմաբար արմատացած ու անբա- մանելիօրէն ձուլուած էին կարծես : Յայտարարութիւնը «Մշակ» բա-ռին բացատրութիւն կուտար նախ . այնպէս ինչպէս որ նոր թերթին խմ- բագրութիւնը կը խոսէր այդ բառը . Մշակ՝ չի նշանակիր զօրեղապէս փի- զիքական աշխատաւոր . որ երկիր կը փորէ կամ արհեստ մը կը ընթաց- տար . Մշակ եւ ըն- լոր այլ . անձերը՝ որոնք հասարակու- թեան օգտին համար աշխատութիւն մը կը կատարեն . ըլլալ փիլիքական . ըլլալ մտաւոր . Մարդկային իմացա- կանութիւնը՝ դիտութեան . գրական- նութեան կամ արհեստներու միջո- ցաւ արտայայտուելով հետզհետէ յա- տալ բերած է ու պիտի բերէ բնու- թեան վրայ անոր կատարելով ու ամ- բողջական սիրապետումը . որ մարդ- կային ընդհանուր ազգին հաւաքա- կան գործն է եւ կիրականանայ ա- ունձնապէս Աշխատանքի շնորհի : Ուրեմն բոլոր մշակները Աշխատանքի զինուորներ են . որոց փոխադարձ յարաբերութեանց մէջ Միւրող արդա- րութեան շափը հանուր հասարակու- թեան յատկացումն ու բարօրութիւ- նը կը բնորոշէ : Արդ՝ զր . կանոնքան եւ ւսանաւանդ օրագրութեան գործն է առաջնորդել այդ Աշխատանքի մշակ- ները ու՝ իրենց ձգտումներուն մէջ պահել այդ փոխադարձ արդարու- թիւնը ու հաւասարակշիւութիւնը . որ- պիտի մարտնչուին յոռատիւնիւր

Արգար կովկասեան հայութեան մէջ 80 թուականի օգտակար գործիչներէն էր . երբ հայութեան իտէալը դարոց- անկախ եկեղեցի . գրականութիւն եւ բարեգործական ընկերութիւններու- նենայու մէջ կը կայանար . 90 թեա- կաններուն պահանջները . որոնք գրուեցան հայութեան առջեւ . Ար- գարին համար . ինչպէս եւ անոր նման շատերուն . անմատչելի . ան բարձրելի եւ անիրականալի էին . ու ան հատրասին առաջնակարգ եւ յա- տալ ընթացող գործիչ ըլլալ վաղուց ի վեր գաղաւթ էր :

Արգար թողուած է Լորիս Մելի- քովին . Լազարեան . եւ հայոց նը- շանաւոր . եպիսկոպոսներուն քովը թիֆլիզի Մայր-Նկեղեցիին գաւթին մէջ . այս պարագային եւս զատու- լով Արծրունիէն . որ կատակած էր զինքը հանրային գերեզմանատան մէջ թաղել :

Իսկ

ՀԱՆԳԱՆԱՎՈՒԹԻՒՆ

Ի ՆՊԱՍՏ Հ. Յ. ԴԱՇՆԱԿԵՆԻԹԵԱՆ

—(10)—

Արգէն նախօք իմացուցուած էր թէ . ինչպատ Հ. Յ. Դաշնակցու- թեան Պարկուզի Միթակօմիտէն հանգանակութեան մը ձեռնար- կած է եւ կը շարունակուի տակա-ւելն : Այս անգամ վերջացած ըլ- լալով կը յայտարարեմք թէ հան- գանակութեան ընդհանուր գու- մարը 1008 լէվ . 85 սանթ . ելուոր ուղարկուի հցաւ Պ. կեղր . Եօմիտէի . իր նպատակին հասցնելու համար :

Այս անթիւ մեր խորին շնոր- հակալութիւնը կը յայտնենք ա-

մեն անոնց . որոնք ցուցնելով ի- րենց սէրը եւ համակրանքը դէ- պի Հ. Յ. Դաշնակցութիւնը . եւ զնահատելով անոր ընդարձակա- ծաւալ . լուրջ եւ խոհեմ գործու- նէութիւնները . աշակից հանդի- սուցան մեզ() :

Պ. Հ. Յ. Դաշնակցութեան Երկրակօմիտէի 20 Մայիս 1904 Ի Պարկուզ

Ի. Ս. Պարկուզի նման փոքրաթիւ հայ բնակիչ ունեցող քաղաքի մը մէջ . մանաւանդ երբ ի նկատի առնենք այն հանգամանքը՝ թէ ատոնց ալ մեծ մասը օրական աշխատանքով ապրող մարդիկ են . անզի ունեցած այս խոշոր հանգանակութիւնը կու- գայ ապացուցանել թէ՛ Շէֆթիներու Դաշնակցութեան համար կուսակցութեան հաւար բրած բարբառնալիքը ոչ մէկ սզեցութեան ունին հանրու- թեան այն մասին վրայ . որը հայոց սիրտ ունի . ու կրնաւ թէ լծ շուրջ կոչուած փառասին մէջ փոխուածները ամեն դիւրութեամբ կրնան փոխուել նաեւ . Պարսոյ թրքական թերթիւր մէջ ժողովուրդը այս անով միայն կրնայ ճակեցնել Գուրպէթ օլլուի նման քրիստոնէ-քրիստոնէներին . ու ընդհանրապէս իր նախնիները . թէ հայ ժողովրդին համար Իրաւունք եւ թրքական Սապա միեւնոյն արժէքը ունին : Սուր- թեան ալ միեւնոյնը կը նկատէ ու թերեւս Գուրպէթ օլլուին յայտնէ ձու- գողի առթիւ Սուրթեանի փրցելը չը յաջողածը Շիֆթի Վահագի վերան- լով փրցնէ բան մը իր թուրք օրի- ճայական պահանջներուն իրովին յա- գուրդ տալ կարենալու համար :

Գուրպէթ օլլուին լրահատար յայտ- դութիւն կը մաղթենք զահալմիտան բոլոր հետեւանքներուն իրովին արժա- նանալու համար :

չի իսպախուի :

Ահա դաւանանք մը որ մեր օրագ- րութեան մէջ դեռ քնաւ տեսնուած չէր . երբ մէկը թերթ հրատարակել ուզէր . կազմաւորուած . սանտրուած նախադատութիւններով . զորս գրը- պանին մէջ պատրաստ ունէր . իս- կոյն հրատարակ կրնայէր . ապառու- լի հասարակութեան՝ բնուր համար թէ՛ ինք համոզուած է «հայ ազգին ազգասիրութեանը» . թէ չեմք ազգը փառաւոր ազգ մը եղած է . ու մենք ալ այդ փառաւոր ազգին նոյնքան փառաւոր զուակներն ենք . թէ ինք եկած է իր ովստեն ծառայութիւն մատուցանելու իր սիրելի ազգին թերթ հանելով . եւն եւն՝ զեռ ան- թիւ ապուշութիւններ . որոնք այդ ողորմելի արարածներուն միակ դըր- մալուի կը կազմէին :

Օրագրութեան դերին ըմբռնումը այսպէս պարզելէ ետքը . Յայտարար- ութիւնը իսկոյն կանցնի նոր թիւ- թիւն ծրագիրը պարզելու . Ահա այդ ծրագիրը . որ իր արձանագրութեան մէջ համեստ . բայց գործնականին մէջ այնքան հսկայ ու արտայայտիչ եղաւ :

«Մշակը պիտի մշակէ միւսքը . թէ տեսուհան եւ ինչ գործնական . մնա պիտի մշակէ լեզու :

«Մշակը չպէտք է բաւականանայ մեքենական կերպով լոկ լուրերը հա- յորդելով :

«Մշակը կախատէ մի կողմից բն- թերթիքի ընթերցասիրութիւնը գրա- սելու . թէ՛ ժողովրդական . թէ՛ օ- տար կեանքից վկայաստութիւններ

ներկայացնել :

«Մշակը կաշխատէ առողջ գաստ- դութեան վերայ հիմնած կենսական խնդիրներին ըննադատութիւններ ներ կայացնել :

«Մշակը պէտք է տեսարար առաջարկի երրոպական քիտութիւնից մշակված ուսման ամեն ճիւղերից առած մտքերը . . այնպիսի գործնա- կան մտքեր . որոնք կարողանային նպաստել ժողովրդեան կեանքի պայ- մաններին բարելաւելուն :

«Մի խօսքով՝ Մշակի խնդիրն է թէ՛ գուարճութիւն պատճառել . թէ՛ օգուտ բերել ընթերցողին :

«Դուք կը կարողաք թէ՛ ոչոք :

Նոր ծրագիրը ինչպէս կը տեսնուի շատ համեստ է . առանց ճատական ու ճի . առանց ազգասիրական դատար- կարանութիւններու . Աշխատանք . ահա անոր միակ նշանաբանը . որ պարփակուած է ամէն ինչ . իրենք ու պատիւ չեն ակնկալելու . անմաս- նալ չեն երազներ . Հոգ չէ թէ իրենց անունները անյայտութեան ճոճը թաղուին ու ապագան անգիտանալ պանոնք . կը բաւէ որ իրենց աշխա- տութիւնը հասարակութեան ունէ օ- գուտ մը մատուցանէ . իրենք ասով իսկ երջանակ պիտի ըլլան :

«Թող կորչի անունը . կը գուշեն յայտարարութեան վերջը .—բարի գոթը չի կորչի . . . ախառե՛նքու :

Ծարուակելի)

Ի.

ՕՐԻՆՏԻՆ ԲՈՒՆԸ



Իրաւ որ արգահատելի ժողովուրդ մը ենք :

Ոչ որովհետեւ անոր համար որ մեր թշնամիները արեւնարբու գազաններու պէս մեր շուրջը թռչող յարմար առիթներու կը նային զմեզ բոլորովին անհետացնելու համար իրենց զօրիւնքն անյատակ կողորդներու մէջ :

Սոյ անոր համար որ իրարու անհավանալի իս բնուրդներու ետեւէ ճետապիղոյ ու անոնց մասնակի շլացումներու ներքեւ արքայի մենք մեր ձեռքով կը պատրաստենք ու մեր գրիտուն կը բերենք մեր փորձանքները ու վիտերը :

Իրաւ ժամանակը այդ ամեն աղէտներու պատրաստութեան մէջ իբր անողոք մասնակցութիւնը ունի . բայց այդ մասնակցութեան եղբունական կողմէ կը պատկանի նոյն իսկ անոր :

Որ կը թողու որ նա զառնայ կոյր գործիք մը մշտնջենաւ որչափ համար յանցանքներու այն իստարը , ուր ոչ յոյսի նշոյլ մը թափանցած է և ոչ կամքի շող մը , նա՛ կը սեմ ժամանակը որ սակայն բեղմնաւորութեան ու զարգացումի թափանցանք միջոցն է :

Թերթերը գրեցին մեր քաղաքի Ազգ. վարժարաններու փակուած հանրային կրթութեան նախարարութեան տնօրինութիւնով :

Ներկայ կրթական տարեշրջանի մէջ այս երկրորդ անգամն է որ յատկանական ճգնաժամի մը մէջ գալարող այդ գծաւոր վարժարաններու դուռները կը գոցուին , ու մեր գուակները՝ ապշած՝ դուրս կը նետուին :

« ԿՐԱԿՈՏ ԶՈՒՐԸ »

(Միտրի կեանքից) (Թարգ. ռուսերէնից)

Չ. (Շար. Ասիայի քաղաք)

Կրակոտ ջրի անունը տալիս միայն Բոյազիրի աչքերը հրաւիրուած էին . իսկ կնոջ բազմաթիւ խօսքերի հանդէպ նոյն աչքերը փոսերի մէջ հասարակած պղտոր ջրերի գոյն էին ստանում :

Բոյազիրը մտաբերում էր իր հարած ժամանակու տեսած երազները . որչա՛փ հրաշայի երազներ էին :

Տունըրան իրականութեան մէջ սպիտակ , դաժան . ձիւնակոյտի նրան ամպերով ծածկված . ընկղմած ամպանման ձիւնի ալիքներում , երազում ծածկվում էր ծաղիկներով : Այդ ծաղիկները շողողում էին . գոյն ապրիլ , գոյն առնուած , գլխիկները շարժում եւ երգում ինչ որ հրաշայի երգ , որի նմանը իրականութեան մէջ երբէք չես կարելի :

Մաղիկները վերեւում սպիտակ էր երկինքը , որում փայլող աստղերը երևում էին օր ցերեկով : Տունըրանում շրջում էին մարդիկ , որոնք բոլորովին նման չէին սովորապէս իրականութեան մէջ իր տեսած հոգեկան տանջանքներից , ալիստաութիւնից ընկճված մտահոգ մարդկանց : Երազում տեսածները ամենքն

միեւնոյն զգացումին , որ մեր հոգեբանութեան խախտման է , միշտ իրարու հակառակելու ձգտումը , որ , առա՛ջ , մեր ցեղի բնորոշ յատկութիւնն է դարձած այլեւս :

Մեր վարժարաններու այսօրուան վիճակին ըստին հաւասարապէս պատասխանատու են այն երկու հոգաբարձութիւնները , որոնք բնատուեցան ներկայ տարեշրջանի մէջ : Յանցանքները միեւնոյն են . միայն սատարներու թեւում , որ նախկինը իբր ընկերքը լրաւ օրէնքին վրայ կրթութեամբ , իսկ երկրորդը՝ օրէնքին դէմ կանգնած , և քանի որ անոր պաշտօնն էր սխալ սկսուած դրութեան մը ծաւալումը սահմանափակել . ներկայ կացութիւնը , որուն՝ կարելի է ըսել՝ յամառ գիտակցութեամբ ու պաղարիւն փրկութեամբ իր համար մը անսպասեց . կը հարցնեմ վրդովիչ ձեզնեթիւն մը չէ եղած միթէ անոր կողմէն :

Իրողութիւնը ծանրակշիռ է . ու անոր հանգամանքի ազդեցութիւնը կրմբնուի իսկոյն . կրք մտածուի թէ քսան եւ հինգ տարիէ ի վեր որ , կապրինք այս բարեփոխուած երկրին ծոցը , առաջին անգամն է որ այսպիսի տնօրինութիւն մը կը լրայ մեզ՝ հայերուս՝ դէ՛մ :

Մենք զմեզ շարժար խորած պիտի ըլլանք եթէ ներկայ իրողութիւնը առժամանակեայ դէպք մը , կամ պարզապէս սխալ իրական տնօրինութիւն մը համարենք հոգաբարձութեան դէմ , որ ուսուցչու հիւ մը պատճառով նախարարութեան դէմ գրուի վերուցած է :

Այս տնօրինութիւնը՝ ինչպէս որ գիտեմ եղած է հանրային կրթութեան կանոնադրի այն յօդուածներու հիման վրայ , որոնք որ կտրաւարական վարժարաններու մէջ պաշտօնավարող ուսուցիչներու մասին ինչ

ինչ պայմաններ կը տրամադրեն : Այս օրէնքը երեկուրն է . և եթէ անոր գոյութիւնը մեզ հայերու համար իւրաքանչիւր տարեշրջանի կանոնաւորապէս ու սխալմամբ կերպով կրկնուած ազդարարութիւններու մէջ միայն կայացած է , ըսել է որ մենք մեր զաւակներու կրթութեան մասին ինչ ինչ բացառիկ դրութեան վիճակներ ենք վայելած , դիւրութիւններ՝ որոնք շատոնց արդէն խրոտած են մեր դրացի ուրիշ ժողովուրդներու ձեռքէն :

Այսպիսի թանկագին դիւրութիւններու շնորհիւ ու այսպիսի ազատ միջավայրի մը մէջ տարակոյս չի կայ , որ ժամանակը հզօր ու անվրէպ միջոց մը պիտի ըլլար զմեզ կատարելապէս պատրաստելու այն թուականներու համար , ուր դրութիւններն ուրոշ յեղաշրջում մը կրած զուցէ աւելի ծանր պահանջներ պիտի ունենային . և քանի որ այդ դիւրութիւնները բարեհաճ բացառութեան մը արդիւնքն էին , մենք մտածելու էինք որ օրէնքը կրնար յանկարծ քունէն սթափիլ ու բացառութիւնը դադարի , Բայց մենք ի՛նչ բրինք , Ո՛հ . պատասխանը յուսահատեցուցիչ է :

Նախ սենեկով կատարութեան այդ բարեհաճութիւնը՝ որ՝ կը կրկնեմ մինչև ցարդ հայերու համար բացառիկ տնօրինութիւն մը ունեցած է , մենք մեր անհետատես խելքովը կարծեցինք թէ մեզի եղած ազդարարութիւնները չոր ու զամաք սպանալիքն անդին չէին կրնար անցնիլ , և այս մտածումը զմեզ այնքան անբարստաւան ըրաւ ու հետեւաբար այնքան մեղկ ու կորովէ զուրկ , որ մեր կրթութեան գործին մէջ անհոգաբար շարունակեցինք վարել միեւնոյն դրութիւնը , ինչպէս որ է դարերէ ի վեր ծանկատանի մէջ , այսինքն ժո-

ղովուրդին միշտ պատրաստ ու միշտ անձնուէր զոհողութեան փոխան անյաջող ու կիսկատար փակուած շրջաններ , իբր արգասիք այն ալ կատարելագործեալ ու ապիկար գործիքներու , որոնք են ծրագրերը ու ուսուցիչները :

Այսպէս ամբողջ դրամ վասնեց/նք , ու ոչ միայն իրական ոգուտ շտապանք այլ կեանքէ զուտած անձնապահանջներու նման ձգեցինք որ դրամը ու ժամանակը մեզի համար գէշ օրեր պատրաստեն , առանց վշտի կեան մը ուշաբերելու . ու զգալու որ՝ ազատած հին հարստահարիչ բռնակալութիւն է , այլեւս պէտք էր հետեւել նոր սկսած ու քայլ առ քայլ յառաջ գացող այն կրթական յեղաշրջումին , որուն նուիրուած էր պուլկար ժողովուրդը այրութեան նոր սկսած մանուկի մը պէս :

Ի՛նչ էր պատճառը որ այդ ժողովուրդին խանդը զմեզ չի յարգից , ու մենք չընկերացանք իրեն այն ճամբուն մէջ որով նա կընթանար :

Սուքերս թող սխալ չի մեկնուին : Անշուշտ չեմ ուզեր բնել որ մենք ալ կրնայինք կրթական ասպարէզին մէջ ձեռք բերել այն միեւնոյն բազմակողմանի առաւելութիւնները , որոնց տիրացաւ այնքան կարճ ժամանակամիջոցի մէջ բազմաաւարտ տղէտ ժողովուրդ մը : Միեւնոյն միջոցները մենք չունէինք : Բայց մեր յանձնառած զոհողութեան սահմանին մէջ , եթէ բարեխիղճ ուղղութիւն մը տիրած ըլլար , մենք այնպիսի բարոյական վիճակի մը հասած պիտի ըլլայինք , որ այլեւս օրէնքը իւր ամեն խստութիւններովը զմեզ չի պիտի կարենար ահաբեկել :

Չիկայ ասպարէզ մը ուր այնքան աւելի ստիպողական ըլլայ յողորդ ճառասիրութիւններէ հետո հաստատ

էլ ուրախ էին , ծիծաղում էին . եւ երբէք չէին լալիս : Նրանք սիրով իրար հետ զրուցում էին եւ նրանց աչքերում երբէք չէր նկատվում նախանձի ու շարութեան փայլը . նոյն իսկ մտայն «վաճառականը» այդ մարդկանց մէջ ուրախ էր , իր տեսարակի մէջ անուաններ չէր նշանակում , ոչ ոքի չէր հայհոյում , չէր ձեռնում , ինչպէս սարածված էր նրա մասին , այլ ստուծ էր :

— Եկէք եղբայրներ երգենք լաւ , հին երգը :

Աւ մարդիկը երգում էին , երգում էին նոյնպէս ծագիկները . ամբողջ տուրքան թնոյում էր ուրախութեամբ եւ ծիծաղով :

Բոյազիրը շատ էր ցանկանում իր երազանքների մէջ ապրել այդ լաւ եւ բարի մարդկանց հետ . բայց ոչ իրականութեան շար . եւ վշտից ընկճված ու ստորացված մարդկանց հետ : Իսկ լաւ մարդկանց շրջանի մէջ ընկնելու համար պէտք էր արբել : Այն առիթը չէր փախցնում ու Մօկսանի հետ թափառելով տունըրանում խմիչք էր փրստում :

Հարած միջոցին Բոյազիրը այնպէս հեզ չէր , ինչպէս լուրջ ժամանակ : Նա կնոջը հայհոյում էր , բարկանում էր պատրաստ էր նրան ծեծել , երբ նա ուզում էր արդիւն իր խրճիթը լցված բարի մարդկանց հետ լինել : Նա նրանց հետ խօսում էր , ծիծաղում էր , ողջոյն էր փոխանակում եւ ձեռքերն էր սեղմում :

— Այդ ու՛մ հետ ես խօսում հարցնում էր մարիամը Բոյազիրին : Չէ՛ որ

խրճիթում մարդ չկայ :

— Ինչպէս թէ չկայ , իմ բոլոր բարեկամները այս տեղ են . լաւ , հրաշայի բարեկամներ են...

Նստեցէր , մի լաւ ուսերէն երգ երգեց :

Ու Բոյազիրը երգում էր հաւատացած որ բարեկամներն էլ իր հետը երգում են :

— Մարիամը իր ամուսնու այդ տնօրինակութիւնների մասին պատմեց ծեր Շաման Ֆուրսուպտէին եւ վերջինս խոստացաւ երկու եղջիւրով վարձատրութիւն ստանալով Բոյազիրին բժշկել :

— Հրաշայի կերպով էր դիւթում շամանը , ծեր փուրսուպտէն : Երբ նա երգում էր , թուում էր թէ կարապներ էին թռչում նրա գլխի վերեւով եւ իրենց թեւերը սուսափում :

Մարիամը գլուխը վեր էր բարձրացնում , բայց կարապները արդէն անհետացած էին լինում : Իսկ մի վայրկեանից յետոյ Նրանից մօտիկ գայլ էր ոռնում , կարծես գետնի տակից , յետոյ շամանը վախցնում էր հիւանդութիւնը . նա արջի նման փռնում էր , ու գատկելով ընկնում քնած Բոյազիրի վրա :

— Ան հիւանդութիւնը դուրս թըռուաւ . աղաղակեց շամանը և ուշաթիփի գետնի վրայ : Ազգուաների կռկոցը խրճիթը լրցրեց . կրկին թեւերը աղմկեցին . ապա ամէն ինչ լռեց :

— Հմուտ է շաման Ֆուրսուպտէն , յայտարարեցին բոլոր ներկայ եղողները և նէէրներով փառաւորեցին նրան :

Բայց Բոյազիրը շտողջացաւ ու շարունակեց առաջվան պէս խմել : Այն յանկարծ տունըրանում լուր տարածվեց թէ Լանդուրը բարկացել է Բոյազիրի վրա , դադարել է օդի տալ և իր մօտ պահանջում հաշիւները կարգադրելու :

— Գնա՛ , խորհուրդ էր տալիս Մօկսանը . թէլեւ թեզ մի լաւ կը ծեծի , բայց կրկին պարտքով կը տայ... նա միշտ այդպէս է անում...

Բայց Բոյազիրը վախենում էր Լանդուրի հաշիւտեսութիւնից , ու խուսափում էր նրան հանդիպելուց :

Երբ լուր տարածվեց թէ Լանդուրը շրջագայում է տունըրանում իր աննելիքները գանձելու համար . Բոյազիրը շարունակ տեղափոխվում էր տունըրանի ամենահեռու անիկները , մինչև որ Լանդուրը քայլէր գնար :

Է .

Պատահեց մի դէպք , որը քիչ մնաց Բոյազիրին ստիպել խմելուց ձեռք քաշել . մեռաւ նրա բարեկամ կինտարէ Մօկսանը : Հարած Մօկսանը գնում էր այնտեղ , ուր զգում էր նրա հոտառութիւնը խմիչքի գոյտիկները : Դեռ նոր վերջացել էր երեքօրեան քէֆը մի լաւ արտագրողի մօտ : Այնտեղ Մօկսանը խմեց շորս վեղբո օդի և մի շիշ էլ ծխախոտով համեմված օղու ամանի լացվածք :

(Շարունակելի)

սկզբունքի վրայ կոթնած գործերը, որքան կրթականի մէջ, և և սակայն դժբաղդաբար այդ ասպարէզը գրեթէ պուրկարահայերու համար գոյութիւն չունի: Վերը ըսի որ այդ օրէնքը՝ որուն գործնական առաջին քայլին առջեւ այնքան դողացինք՝ երեկուրէն չէ, Բայց միթէ՞ եղաւ մէկը որ զգացներ թէ այդ տրամադրութիւններն որոնք մինչեւ ցարդ անգործագրելի մնալով, աւելի ուսումնասիրական անկեղծութեան մը մէջ կը ներկայանայ, որ մը կրնային ահաւոր զարթնում մը ունենալ: Եղաւ միթէ՞ մէկը որ նախանձախնդիր վասնուած դրամին ու ժամանակին և զորքան որ նպաստաւոր առիթներու վայելումը ունէինք, ձեռք առնելու զիստ այն կենսական գործին, որ շնորհիւ երկրին մատակարարած հանգամանքներու քանակի արդիւններ պիտի տար, ու ստանալով կարեւոր դիրք մը՝ հակադէմոկրատիան մասնակի այն զրկանքները, որոնց ենթակուած են Ռուսիոյ և Տաճկաստանի մեր եղբայրները: Վերջապէս եղաւ միթէ՞ մէկը որ քարոզէր թէ, եթէ կողմնակի մեր կրթական գործին մէջ քիչ շատ ինքնավար գրութիւն մը պահել, պէտք էր որ աշխատէինք ունենալու մեր մէջէն օրէնքի պահանջած պաշտօնեաները:

Մամուլի էջերու մէջէն ուր ժողովուրդը իւր պէտքերն ու իրաւունքներուն բացատրութիւնը կորոնէ՞ շատոնց է որ կրթական խնդիրները անհետացած են:

Դառնութեամբ ու պոզանքով կը համակուինք, երբ կը լսենք որ Ռուսիոյ հայերու Ազգ. վարժարանները ուղղակի Ռուսիէն պաշտօնեաներու հակողութեան ներքեւ կը կառավարուին, ու այդ պաշտօնեաները մեր հացը ուտելով, մեր գաւակները կօտարացնեն:

Եթէ օր մը միեւնոյն բանն ալ մեզի պատահի, ինչ որ յուսալի է և ոչ խուսափելի օրէնքի ծանուցեալ յօդուածներու տրամադրութեան համաձայն, կը հարցնեմ յանցանքը, յանցանքը որո՞ւնն է...:

Հակառակ ամենայնուայն է ազգափարներու, կը սիրեմ յուսալ որ Պուլկ. կառավարութիւնը իր ասպարէզ մեր ժողովուրդի տածած բարեացակամութեան, յառաջիկայ տարեշրջանի համար, չի պիտի ունենայ ծանր պահանջներ: Բայց քանի որ Թիւրքի հոգաբարձութիւնը իր քաղաքականութեան առջեւ նետոց անհրաժեշտ է այլեւս կրթական ասպարէզին մէջ մեր գործունէութեան տալ աւելի որոշ ուղղութիւն մը որ պիտի կայանայ մեր պէտքերը հոգսով, օրէնքին տրամադրութիւնները գոհացնելու մէջ, որպէս զի սեւ ամպեր չի մթադնեն մեր խաղաղիկ կեանքի հորիզոնը մինչեւ այն ատեն... Ո՛հ, չեմ գիտեր, մինչեւ ե՞րբ...:

Օրէնքը կը քննեայ զեռ, գիտեանք անոր յունէն օգտուել...:

Պ. Թեղազեան

Թիւրքի
22 Մայիս 1904

ՍԱՍՈՒՆԻ ՎՐՍՅ ԵՂԱՅ
ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԸ

— 0. —

Ս. րոպական 10 ապրիլ. — Բուրտերու յանկարծակի յարձակումը Գիւլիէն-Կէնձանի վրայ, որպէս-

զի պատրուակ ստեղծեն Սասունը շնչելու համար:

12 ապրիլ. — Կր յարձակին Սասունցիք և Շէնիկի Սեմալի գիւղացիները ետ կը մղեն Կիւլիէն-Կէնձանէ վրայ յարձակած քիւրտերը, անոնց կորուստներ պատճառելով:

18 ապրիլ. — Պիլիսի վայրի մէկ րիտ պէյը Մուշ կը հասնի, սիրալիբ տեղակցութիւն մը կուեննայ առաջնորդին և նշանաւոր հայերուն հետ:

20 ապրիլ. — Նոր սեփականութիւն մը կուեննայ վալիին առաջնորդին և կարեւոր հայերուն հետ. անօգուտ կը համարէ հայերուն միջնորդին միջոցաւ բանակցութեան մտնել Սասունցիներուն հետ և անոնց կարգիլէ այդ մասին Պուլիս հեռագրել:

21 ապրիլ. — Պիլիսի առաջնորդը Մուշ կուգայ:

Գրեթէ նոյն թուականին Մուշ կը հասնին Ֆրանսական և անգլիական հիւպատոսները. որոնք կը պահանջեն իրենց ուսուցչականակցին:

22 ապրիլ. — Վալիին կուգէ առաջնորդները և նշանաւոր հայերը ստիպել սուտ տեղեկագիր մը ստորագրել տալ, որով պիտի յայտարարուէր թէ պատճառները չեն ուզեր անձնատուր ըլլալ, մինչդեռ բանակցութիւնները տեղի չեն ունեցած:

Յարձակում Ենիկի վրայ և հրդեհ:

23 ապրիլ. — Վալիին առաջնորդները և նշանաւոր հայերը յանկարծ կը մեկնին Սասուն, վերջինները աւելի իբր պատանգ կը տարուին, քան վկաներ: 7 վաշտեր, որոնց երեքը համախմբէնք ինչպէս և զօրաւոր քիւրտ հրոսախումբ մը կը հետեւին վալիին երկուսի բաժնուած և կուղուին զէպի Կէլի-Գիւլան և Տալուրիկ:

24 ապրիլ. — Վալիի գալէն առաջ քիւրտերը, թուրք հեծելազօրքը և ոստիկանները կը պատրաստուին յարձակիլ Սէմալի վրայ, բայց ետ կը ձգուին:

25 ապրիլ. — Առաջել վարդապետը, Սասունցիներուն պետերուն հետ բանակցելու պատրուակով կը շրկուի Գիւլանէն: Մինչդեռ իրականութեան մէջ աս ծուղակ մը կը կըլլայ և զօրքերը կը յարձակին Սէմալի վրայ գիշերը:

26 ապրիլ. — Յարձակում Սէմալի վրայ. անգէն բնակչութիւնը կը քայտուի Կէլի-Գիւլան. Սէմալ կը հրդեհուի. Հրայրը կըսպաննուի. Երեք նոր վաշտ զինուոր կուգայ Տիւրքի քիւրտերը և կուղուի զէպի Տալուրիկ. 1500 քիւրտեր կը պատրաստուին իջնալ Մշոյ գաշտը:

Սասունցիները ետ կը մղեն Կէլի-Գիւլանի վրայ քիւրտերու և զինուորներու մէկ յարձակումը:

28 ապրիլ. — Վաշտ մը զօրք կերթայ Հաւատորկի վրայ:

29 ապրիլ. — Նոր յարձակում Կէլի-Գիւլանի վրայ. զօրքերը կը յարձակին հայ քիւրտերուն վրայ որպէս զի բնակչները դաշտ իջնան և զէպի Մուշ երթան:

Առաջնորդները և նշանաւոր հայերը իրենց վրաններուն մէջ զօրքերէն կը հսկուին:

3 մայիս. — Կէլի-Գիւլանի վրայ յարձակում կը գործեն 12 հազար զինուորներ և 26 հազար քիւրտ ու թիւրք. 12-15 թնդանօթներով:

4 մայիս. — Սասունցիները և Անգրանիկ որոնք մինչեւ այդ օրը կը քցած էին իրենց գիւղերը պահպանել կատարուին քաշուելի ձիւնապատ նետօք լեռը:

5 մայիս. — Յարձակում Կէլի-Գիւլանի վրայ. 45 գիւղերու, ըստ էրզրումի նամակի 27, անպէն ժողովուրդը կը կոտորուի. ողջ մնացածները կրնեն, Ելի-խաներ և ծերեր, բացի երիտասարդ կիներէ և աղջիկներէ, բոլորը Մուշ կը տարուին, անտանելի վիճակի մը մէջ:

Այս թուականներուն մտաւորապէս, կայսերական իրատեսով մը, Սասունի գրաւումը կը կարգուի, այսինքն Սասունցիները պարտաւորուած կըլլան դաշտ իջնալու, որպէս զի այնտեղ աւելի դիւրութեամբ կոտորուին:

(Բոս Արմենիա)

«Լիւմանիթէ» թերթին մէջ Պ. Բրէստսէ խիստ յօդուածով մը կը յայտարարէ, երեսփոխանական ժողովին մէջ իր ընկիւնք հարցապնդումի մասին:

Միւս թիւով այդ յօդուածի թարգմանութիւնը կը հրատարակենք:

Յուսածք արգեօք որ այս անգամ Բրէստսէ և իր մեծայարգ ընկերները պիտի կարենան ֆրանսական կառավարութեան ստիպել տալ իրենց հայրենիքին վայելի դիրքը բռնելու իր իրաւունքները պաշտպանող ժողովրդի մը վերաբերմամբ և աշխարհիս մեծնազազան բռնապետներէն միոյն հանդէպ:

— Իտալիոյ Պուլոյ զեպանը, որ Հոռով կը գտնուի, նախարարապետին և արտաքին գործոց նախարարին հետ քանի մը անգամ տեսակցութիւն ունեցելէ Պուլքաններու և Հայաստանի մասին:

Դեպքանը շուտով իր պաշտօնատեղին պիտի մեկնի: Ան կառավարութեան մասնաւոր հրահանգներ ընդունած է Հայաստանի մասին:

ՁԵՐԱԶ ԻՐ ԲՈՒՆ ԴԵՐԻՆ ՄԷՋ

Հայոց հին և ծերգործիչը Ձերաչ որուն նկարագիրը:

տարիքը և մասնաւոր թիւեր բաւական խոշոր անջրպետով մը կը բաժնեն զինքը ներկայ յեղափոխական վարիչներէն, իր ազատասիրական հիմնական կէտին մէջ ինչպէս և կը վայելէ անկեղծ հայրենասէրի մը, կուգայ միանալու այն մարդոց կարծիքին, որոնք Շէֆքիներու նման թուրքէն կը հայհոյուին կը մրտադրեն:

Պ. Ձերաչը Լ'Արմէնիի վերջին թիւին մէջ «Սասունի մէջ» վերջնազօրով յօդուած մը ունի, որուն մէջ եւրոպական գիւնադիտութիւնը ձաղկելով միասին կը գտնուի որ նախարարական թուրքական վարութիւնը եղած է իր դժոխային ծրագիրը իրագործելու նպատակով. այսինքն Սասունցիները իրենց լեռներէն վարիչները, ու հետեւեալը կուղի թուրք կառավարութեան — Գուրաչը պէտք է մոռնայ ի միջայլոց, որ եթէ ինք պիտի կարենայ երկար միջոցով մը լեռնացիները ճնշել, սակայն երբեք չպիտի կարենայ ճնշել լեռները ուր ուրիշ հայ հայրենասէրներ պիտի գտնուին ցցելու ապստամբութեան գործը ամօթալի և ոճրագործութիւնի մը գէ՞մ: Գուրաչը պիտի մոռնայ նաեւ որ եթէ ինք կարող է զօրանոցներ և ամբողջութեան բարձրացնել լեռնային գաւառներու մէջ, ժամանակակից գիտութիւնն ալ կը հարկաւորապատկէ թոյլերու ուժը այլ պատանէչները հացի փշրանքի բու վերածելու համար:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Այս անգամ թերթը լեցում լինելով Սասունի գէպերուն վերաբերեալ լուրերով և տեղեկութիւններով. չը կը քցինք պատրազմի մասին, ուր հայերու ամենամեծ իշնամին իր մեղքերը կը քաէ, լուրեր տալ, մանաւանդ որ կարեւոր ու որոշ լուրեր ալ կը պակսին:

Այսքանը միայն որոշ է, որ ճարտանցիները կամրանան իրենց գրաւած սեպերու մէջ. Բորթ-Արթուրի պաշարումը կը խտացնեն, և միջոցներ ձեռք առած են օգնութեան եկող ուսուցչներուն կրկին դաս մը տալ:

— Տէլի թէլէկրաֆա թիւրք կը հաւաստիացնէ որ այսօր մէկ զօրք կրնայ գիւղերը ճարտանական զօրքին: Անոնց պաշարութեան թիւերը և կորովը մահան հանդէպ չեն ընկճուի:

Պատերազմական բոլոր քննադատները կը խոստովանին որ ճարտանցիներու թաքթիքը կը գոհացնէ պատերազմական գործին բոլոր պահանջներուն:

Отговорникъ Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна